ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ՈՒՍՈՒՑՉԻ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ և հարգարժա՛ն ուսուցիչներ,

Սրտանց շնորհավորում եմ ձեզ մասնագիտական այս գեղեցիկ տոնի՝ Ուսուցչի օրվա առթիվ:

Այսօր բոլորս մեր երախտագիտության ու մեծարանքի խոսքն ենք ուզում ուղղել ձեզ, կրթության ու դաստիարակության ձեր հայրենանվեր և մեծ հարգանքի արժանի աշխատանքի համար:

Տոնի առթիվ առանձնակի ուզում եմ շնորհավորել նաև վաստակած հանգստի անցած մեր ավագ սերնդի մանկավարժներին, ովքեր շարունակում են անգնահատելի խորհուրդներով և բազմամյա փորձով նպաստել մեր ապագա սերունդների կրթման կարևորագույն գործին:

Այսօր մեր երկրի ապագան նույնպես մեծապես կախված է ուսուցչի ամենօրյա տքնաջան և սրտացավ աշխատանքից, նրանից, թե ինչպես եք դուք այսօր իրականացնում այդ չափազանց կարևոր առաքելությունը: Շարունակեք ձեր վեհ առաքելությունը այն գիտակցումով, որ ձեր տված գիտելիքն է դառնալու առաջնորդող ուժ՝ մտածելու և արարելու համար ի բարօրություն մեր հայրենիքի և մեր սիրելի համայնքի:

Սիրելի ուսուցիչներ, ցանկանում եմ, որ ձեր փորձն ու ունակությունները միայն ու միայն խաղաղ պայմաններում փոխանցեք մեր աշակերտներին: Անսպառ ուժ ու եռանդ ձեզ:

Եղե՛ք առողջ և միշտ գնահատված:

Շնորհավո՛ր տոնդ, ուսուցիչ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ